

ՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Բանալի բառեր – Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Արշակ Չոպանյան, Նադաշ Շովնաթան, Պարույր Սևակ, Գևորգ Ախվերդյան, սայաթնովագիտություն, քննական-համեմատական մեթոդ, գրական ավանդույթներ, գեղարվեստական պատկեր, գրական ազդեցություն, հայ միջնադարյան տաղերգություն

Հայոց միջնադարյան տաղերգությունը, որ ռուս ականավոր բանաստեղծ, համաշխարհային պոեզիայի մեծ գիտակ Վ. Բրյուսովի իրավացի բնորոշմամբ «մեկն է մարդկային ոգու այն սքանչելի հաղթանակներից, ինչպիսիք գիտի բովանդակ աշխարհի տարեգրությունը»¹, կտակել է սքանչելի շատ էջեր, որոնց մեջ իր կայուն տեղն ունի Սայաթ-Նովայի ստեղծագործությունը: Սայաթ-Նովայից մեզ հասած ժառանգության ուսումնասիրությունն արդեն ունի ավելի քան հարյուր վաթսուն տարվա պատմություն: Այդ ժամանակաշրջանում սայաթնովագիտությունը ստեղծել է մի պատկառագրու գրականություն², որը թեև, ճիշտ է, լեցուն է իրարամերժ կարծիքներով ու հակասություններով, ենթադրություններով ու շփոթություններով, շատ դատումներ էլ արդեն հնացած են և անընդունելի, այնուամենայնիվ վստահորեն կարող ենք ասել, որ սայաթնովագիտությունը արձանագրել է էական նվաճումներ թե՛ բանաստեղծի կենսագրության և թե՛ նրա ստեղծագործության գրականագիտական վերլուծության ասպարեզում: Այդ քննությունների մի հիմնական մասը հաճախ ունի թուուցիկ բնույթ. կա՛մ, ասենք, գրված է առաջաբանների սահմանում, բանախոսությունների ոճով, կա՛մ ընդհանուր գնահատանքի մակարդակով: Սակայն գրականագիտության պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ անգամ ծավալով փոքր հոդվածներում երբեմն առավել բնութագրական գնահատականներ են տրվում այս կամ այն գրողին կամ որևէ ստեղծագործությանը: Հաճախ էլ կողմնակիորեն արված մի դիտողություն կամ ակնարկ, մի դատում կամ ասույթ հատուկ հնչեղություն են առնում, առանցքային դառնում տվյալ հեղինակի ստեղծագործությունը ճիշտ ընկալելու, առանձին հատկանիշներ մեկնելու կամ գնահատելու համար: Հենց այս առումով ուշագրավ են այն գնահատականները, որակումները, որոնք հայ միջնադարյան քնարերգության մեծ գիտակ Արշակ Չոպան-

¹ «Поэзия Армении», М., 1967, с. 7.

² Տե՛ս **Սևակ Պ.**, Սայաթ-Նովա, Մատենագրական ցանկ, Երևան, 1987, էջ 384-397, **Բախշինյան Հ.**, Սայաթ-Նովա, կյանքը և գործը, Երևան, 1988, էջ 341-350:

յանը տվել է Սայաթ-Նովայի ստեղծագործությանը: Թեպետ նա հատուկ ուսումնասիրություն չի գրել մեծ տաղերգուի և նրա ստեղծագործության մասին*, սակայն տարբեր առիթներով, ավելի հաճախ շատ հակիրճ բնութագրումներով անդրադարձել է Սայաթ-Նովայի բանաստեղծությանը, արել հետաքրքիր մի շարք նրբին դիտարկումներ, որոնք, սակայն, անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել: Սակայն հենց միայն այն փաստը, որ առաջին անգամ Ա. Չոպանյանն է Սայաթ-Նովային, Նաղաշ Հովնաթանին ու Նահապետ Քուչակին դրել համեմատության մեջ, նրանց քննարկության մեջ մատնանշել ինչպես էական տարբերակիչ, այնպես էլ որոշ ընդհանուր հատկանիշներ, արդեն բավական է, որ նրա գնահատականները Սայաթ-Նովայի քննարկության վերաբերյալ պատշաճ ուշադրության արժանանան:

1910 թ.՝ սայաթնովագիտության մի նոր, աննախադեպ վերելքի շրջանի հենց նախաշեմին, երբ դեռ լույս չէր տեսել Հովհ. Թումանյանի «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» հայտնի ուսումնասիրությունը, Ա. Չոպանյանը հրատարակեց «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գիրքը:

Գիրքը պարունակում է Նաղաշ Հովնաթանի տաղերը և Հովնաթան Հովնաթանյանի որմնանկարների և գեղանկարների լուսանկարչական վերատադրությունները, վերջանում է Նաղաշ Հովնաթանի Հակոբ որդու ողբերգով՝ ասված հոր մահվան կապակցությամբ: Այն ունի նաև համառոտ մի առաջաբան, որտեղ Ա. Չոպանյանը գնահատում և խնամքով վեր է հանում թե՛ բանաստեղծի (Ա մաս) և թե՛ նկարչի (Բ մաս) ստեղծագործությունների արժանիքները:

Այս հատորը դարձավ Նաղաշ Հովնաթանի վերաբերյալ առաջին գիտական ուսումնասիրությունը, որի լույս տեսնելուց հետո մեր բանասիրության մեջ բանաստեղծի երգերի հրատարակության, մասամբ և ուսումնասիրության գործում սկսվեց մեծ աշխուժացում: Պարբերական մամուլում՝ թերթերում, հանդեսներում, ամսագրերում, ինչպես նաև առանձին գրքերով լույս տեսան ուսումնասիրություններ և գրախոսություններ՝ նվիրված Նաղաշ Հովնաթանի կյանքին և ստեղծագործությանը¹: Վերջիններս, ճիշտ է, թեև ունեն նյութի ավելի լայն ընդգրկում և ավելի ամբողջական են քննության տեսակետից, սակայն պետք է ասել, որ բանաստեղծի ստեղծագործության վերլուծության և գնահատման այն ընդհանուր ելակետային սկզբունքները,

* Պետք է ավստասլ, որ ականավոր բանասերն ու գրականագետը, որ բազմաթիվ ուսումնասիրություններ ունի ժամանակով հեռու ու մոտիկ հայ միջնադարյան շատ հեղինակների մասին՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Նաղաշ Հովնաթան, առանձին ուսումնասիրություն կամ հոդված չի նվիրել Սայաթ-Նովային: Դժվար է ասել, թե որն է եղել «ձեռնպահ մնալու» պատճառը:

¹ Այդ մասին տե՛ս **Մկրտչյան Մ.**, Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 14-18:

որոնք առաջադրել էր Չոպանյանը, այնուհետև հիմք ծառայեցին Ն. Հովնաթանի ժառանգության գրեթե բոլոր ուսումնասիրողների համար:

Մեզ համար, սակայն, Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գրքի առաջաբանում ուշագրավն այն է, իհարկե, որ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության վերլուծությունը Չոպանյանը կատարել է ոչ թե ինքնամփոփ ձևով, այլ ընդհանուր արևելյան և հայ միջնադարյան բանաստեղծության տեսադաշտում անհրաժեշտ գուգահեռներով ու գուգորդումներով՝ մասնավորապես Ն. Հովնաթանի բանաստեղծությունը համեմատելով Ն. Քուչակի ու Սայաթ-Նովայի գործերի հետ:

Չնայած այդ համեմատությունները կատարվում են առաջաբանի ընդամենը մի քանի էջում, սակայն տված գնահատականները ունեն գիտական լրջություն ու խորություն և ցույց են տալիս, թե ըստ ամենայնի որքան ճիշտ է Չոպանյանը ըմբռնել ու հասկացել բանաստեղծներից յուրաքանչյուրի ստեղծագործության առանձնահատկությունները, նրանց երգերի բնավորությունը: Քննական-համեմատական այդ մեթոդով գրականագետը ուղղակի թե անուղղակի պարզում է նաև սայաթնովյան երգերի և արևելյան քնարերգության միջև եղած գեղարվեստական-տիպաբանական ընդհանրությունները, հատկապես Հովնաթանի քնարերգությանը տված գնահատականների դիրքից բացահայտում Սայաթ-Նովայի երգերի առանձին կողմեր: Երկու բանաստեղծների ստեղծագործության վրա էլ Չոպանյանը նկատում է արևելյան, մասնավորապես թուրքական ու պարսկական բանաստեղծության ազդեցությունը. «Յովնաթանի բանաստեղծութիւնը չի կրնար Քուչակին հետ բաղդատուիլ: Չունի անոր չափ ցեղային ինքնատիպութիւն: Սայաթ-Նովայի պէս՝ Յովնաթան ալ տոգորուած է պարսիկ ու թուրք բանաստեղծութեան ազդեցութեամբ. և որքան ալ խորքին մէջ հայկական շեշտն զգալի ըլլայ, իր ձևին մէջ մահմետական գեղեցկագիտութենէն շատ տարրեր կը մտնեն»¹: Ավելի քան կես դար առաջ ոչ միայն Սայաթ-Նովայի, այլև ընդհանրապես հայ աշուղական բանաստեղծության վրա արևելյան քնարերգության ազդեցության մասին խիզախել էր խոսել Գ. Ախվերդյանը. «...Մեր երգիչներն (նկատի ունի հայ աշուղներին – Վ. Ա.) չեն մնացել զուրկ ներգործութենից Օսմանցոց, Թուրքաց, մանաւանդ Պարսից, որք առաջնորդել են մեզ ճաշակումն, ու առհասարակ միշտ ունեցել են մեծ ազդեցութիւն մեր կենցաղավարութեան վրայ: Հայերէն ասած խաղերու երաժշտական եղանակներն, բանաստեղծական ձևերն, խօսքի դարձուածն միշտ պատահում են Պարսից ու Թուրքաց մէջ. սրանցմէն հաւաստեաւ փոխ առած պիտի ըլի մեր աշուղն (Սայաթ-Նովան – Վ. Ա.) իր ձևերն»: Խիզախել էր, բայց բանը չէր հասցրել ավարտի. «Բայց էս կարծիքն, որն որ երեսանց ապացույցի կարօտ չէ, ստու-

¹ **Չոպանեան Ա.**, Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 13:

գապէս կարօղ չենք հաստատել, մինչև որ չը քննըվին ու չը ջոզվին յատուկ Պարսից բանաստեղծներուց բանեցրած եղանակներն»¹: Իր նախորդի ձեռքով կիսաբաց թողնված դուռը համարձակվել է ծածկել (Պ. Սևակի արտահայտությունն է) Ա. Չոպանյանը, որն իր գրական-մշակութային գործունեության գրեթե բոլոր շրջաններում էլ խիստ շահագրգռություն էր ցուցաբերում Արևելքի մշակութի նկատմամբ, մասնավորապես մեր ժողովրդի մեջ վերջինիս տարածման անհրաժեշտության հարցում: Հատկապես իր խմբագրած «Անահիտ» հանդեսի էջերում նա ձգտում էր հայ ընթերցողին ծանոթացնել պարսկական, արաբական, անգամ թուրքական գրականությանը²: Սակայն պարզ ծանոթացումով չէ, որ բավարարվել է Չոպանյանը: Այդ կերպ խնդրի չնչին մի մասը սոսկ լուծած կլինէր: Նա յուրացրել էր արևելյան մշակույթն ու բանաստեղծությունը և յուրացրել էր ոչ միայն Արևելքի վերաբերյալ հողվածային անդրադարձումներով կամ գրախոսություններով³, այլև թարգմանությունների միջոցով: Օրինակ՝ 1902 թ. «Անահիտի» 8-րդ համարում նա տպագրել է Օմար Խայամի 14 քառյակներ, որոնք ֆրանսերենից թարգմանել էր ինքը: Ավելի ուշ նա հայ ընթերցողներին է ներկայացրել ֆրանսերեն լույս տեսած «Թրքական սիրո ծաղկաքաղ» ժողովածուն՝ գրախոսելով այն և մի քանի սիրային բանաստեղծություններ իր իսկ թարգմանությամբ հրատարակելով⁴: Ընդհանրապես «Անահիտի» տարբեր տարեթվերի համարներում հաճախ կարելի է հանդիպել պարսկական բանաստեղծությունից բազմաթիվ թարգմանությունների⁵, քննական ուսումնասիրությունների⁶՝ կատարված տարբեր հեղինակների կողմից: Ինքը՝ խմբագիրը, խրախուսում էր պարսիկ գրականությունից թարգմանությունները: Այս ամենը վկայում են, որ Չոպանյանը շատ լավ գիտեր անցյալի լավագույն գրական ավանդույթները, արևելյան բանաստեղծության ձևի, մասնավորապես լեզվի ու ոճի առանձնահատկությունները, թեմատիկ ընդգրկումները: Այնպես որ Նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի ստեղծագործության վրա արևելյան բանաստեղծության ձևի, ճաշակի ազդեցության մասին գնահատականները պատահական չեն: Դա է հաստատում Ա. Չոպանյանի վերոհիշյալ նույն հողվածում գրեթե համանշանակ բովանդակությամբ հաջորդ խոսքը. «Գալով տաղաչափութեան, ձևերը գոր կը գործածէ Յովնաթան՝ նուազ փոխառիկ, աւելի ինքնատիպ և ազատ կը թուին քան Սայեթ-Նովայիները, որոնք արաբ-պարսիկ տաղաչափական բարդ ձևերուն վրայ կաղապարուած են»⁷: Դա է

¹ Ախվերդեան Գ., Սայեթ-Նովայ, Մոսկվա, 1852, էջ 9:

² Տե՛ս «Անահիտ», 1902, թիվ 8, թիւ 9-10, 1905, թիւ 3:

³ Տե՛ս «Անահիտ», 1901, թիվ 1, 1905, թիւ 3:

⁴ Տե՛ս «Անահիտ», 1905, թիվ 3:

⁵ Տե՛ս «Անահիտ», 1901, թիվ 9, թիւ 10-11, 1903, թ. 1, 4, 5, 8, 11, 12:

⁶ Տե՛ս «Անահիտ», 1904, թիվ 2, 11, 12:

⁷ Զօպանեան Ա., Նաղաշ Յովնաթան աշուղը եւ..., էջ 15-16:

հաստատում նաև բանասերի՝ հետագայում նույնքան համոզվածությամբ արտահայտած նույն միտքը, որն իր բովանդակությամբ ներդաշնակորեն ներհյուսվում է ավելի վաղ ասվածին. «Թիֆլիսի տեղական հայ բարբառով շարադրած անոր (Մայաթ-Նովայի – Վ. Ա.) երգերուն մեջ, որ կը համարուին իր արտադրութեանց գեղեցկագոյնները, կը զգացուի հայ միջնադարեան բանաստեղծութեան կամ ժողովրդական երգերու եւ նաեւ պարսիկ, վրացական ու թուրք քնարեգութեան ու տաղաչափութեան որոշ ազդեցութիւնը, որուն կը տիրապետէ իր անձնական հմայիչ տաղանդը»¹:

Մայաթ-Նովայի ստեղծագործության համար բնորոշ այս առանձնահատկությունները հետագայում նկատել են շատերը: Օրինակ, Պարույր Սևակը իր հայտնի «Մայաթ-Նովա» մենագրության մեջ, ցույց տալով սայաթնովյան երգերի և արևելյան քնարեգության միջև եղած գեղարվեստական-տիպաբանական ընդհանրությունները, նախ բացատրում է. «Սեղմված այս եռակի կաշկանդանքների (բանաստեղծելու, երգելու, նվագելու – Վ. Ա.) մեջ՝ նա (Մայաթ-Նովան – Վ. Ա.), բնականաբար, չէր կարող խուսափել այն պատրաստի հանգերից ու մակդիրներից, համեմատություններից ու պատկերներից, որոնք, ինչպես ասում են, գտնվում էին նրա լեզվի վրա և ընկնում էին ատամների տակ: Ավելացրեք և ս մի կաշկանդանք, որ հեռու է երկրորդական լինելուց: Գրելու փոխարեն Մայաթ-Նովան ոչ միայն հորինում էր, այլև պարտավոր էր հորինել բանաստեղծական որոշակի չափերով և ստեղծել բանաստեղծությունների որոշակի տեսակներ, որոնցից ամենապարզը ավելի է բարդ, քան արևմտյան **ռոնդոն** ու **սոնետը**...»²: Իսկ հետո անվանի սայաթնովագետը եզրակացնում է. «Մայաթ-Նովայի վրա ընդհանուր արևելյան և մասնավորապես պարսից բանաստեղծությունը ակնառու է այնքան, որ խոսելու տեղ չի թողնում»³: Սակայն, ինչպես հասկացանք, այդ ազդեցությունը իրեն առավել զգացնել է տվել բանաստեղծական կառուցվածքի արտաքին ձևի, ավանդական դարձած ու կրկնվող պատկերային համակարգի, աշուղական բանարվեստի ոճի, չափ ու հանգի օգտագործման մեջ: Իսկ մի վճռական-ջրջադարձային կետում նա տարբերվում է իր նախորդներից. տարբերվում է ոչ միայն նրանով, որ ստեղծել է նոր ձևեր կամ մասամբ շեղվել հին ձևերից, այլև առավել տարբերվում է իր ստեղծած կենդանի, խոր ու տառապալից հուզականությամբ համակված անձնական քնարեգությամբ ու ասելիքով, որ նրան դարձրեց հենց այն բանաստեղծը, ով իր արվեստը հասցրել է բացարձակ կատարելության⁴: «Շատ աւելի սերտ կապ ցոյց կուտայ հայ աշուղական հին բանաստեղծութեան հետ քան Մայեաթ-Նովայի երգը, որ աւելի անձնական նկարագիր մը կը յայտնէ՝ մահմետական բանա-

¹ **Զօպանեան Ա.**, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 34-35:

² **Սևակ Պ.**, նշվ. աշխ., էջ 128-129:

³ Նույն տեղում, էջ 195-196:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

ստեղծութենէն առնուած տաղաչափական ու հռետորական ձեւերու մէջ արտափայլող»¹, – գրում է Ա. Չոպանյանը:

Սայաթ-Նովայի՝ արևելյան բանաստեղծական արվեստից ունեցած ազդեցության մասին գրեթե նույն միտքն է արտահայտում նրա ստեղծագործության լավագույն գիտակներից մեկ ուրիշը՝ Հ. Բախչինյանը. «Սայաթ-Նովան ստեղծագործելով աշուղական բանարվեստով, հայ քնարերգուների մէջ ամենից ավելի է գտնվել արևելյան պոեզիայի ազդեցության տակ: Սակայն նա էլ, առավելապես արտաքին հանդերձանքով է արևելյան, մինչդեռ բովանդակային խորքով, պատկերային համակարգով, իմաստի արտահայտման եղանակներով և բուն գաղափարներով տարբեր է արևելքի բանաստեղծներից և ավելի հարազատ է արևմտյան մշակույթի ոգուն»²: Իսկ շարունակության մէջ հայտնի բանասերը գրում է. «Սայաթ-Նովայի ստեղծագործությունը արևելյան պոեզիայից որոշակիորեն տարբերվում է նաև իր ազգային գաղափարաբանությամբ, քրիստոնէական բարոյականության քարոզներով ու «հոգեշահ» խրատներով»³: Այս երևույթը տարբեր առիթներով նկատել ու նշել են ուսումնասիրողներից շատերը⁴:

Անշուշտ, Սայաթ-Նովայի ստեղծագործության մէջ արևելյան, մասնավորապես պարսից գրականության ազդեցության խնդիրը պահանջում է մասնագիտական առանձին խոր ու համակողմանի քննություն: Մեզ համար, սակայն, սովյալ դեպքում կարևորն այն է, որ Սայաթ-Նովայի քնարերգության համար բնորոշ այդ առանձնահատկությունը առաջիններից մեկը նկատել ու այդ մասին խոսել է Արշակ Չոպանյանը:

Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գրքի առաջաբանը մեզ հետաքրքրող հարցերի առումով արժանի է մեծ ուշադրության նաև այն տեսակետից, որ նրանում հեղինակը, առաջին անգամ մեզանում համեմատության մէջ դնելով Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի ստեղծագործական խառնվածքները, Սայաթ-Նովայի սիրերգության ակունքներում իբրև ներշնչանքի աղբյուր հայտնաբերում է սիրո պատճառած տառապանքը⁵. «Յովնաթան չունի

¹ **Չոպանեան Ա.**, Նաղաշ Յովնաթան աշուղը եւ... , էջ 15:

² **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 120:

³ Նույն տեղում, էջ 121:

⁴ Տե՛ս Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, աշխատասիրությամբ Մ. Հասրաթյանի, Երևան, 1963, էջ XXIII, **Սևակ Պ.**, նշվ. աշխ., էջ 364:

⁵ Գրեթե բոլոր սայաթնովագետները միաբերան խոսել են Սայաթ-Նովայի սիրո ողբերգական բնույթի մասին, ընդգծել այդ սիրո պատճառած տառապանքը (տե՛ս **Սևակ Պ.**, նշվ. աշխ., էջ 300): Ուշագրավ է, որ առաջիններից մեկը այդ մասին գրել է նաև Հովհաննես Թումանյանը: Բանն այն է, որ երբ լույս տեսավ Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» հատորը, հայ մտավորականներից շատերը շտապեցին իրենց դրվատանքի խոսքը հղել մեծ բանասերին (այդ մասին տե՛ս **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 196-197): Հիացական խոսքով հանդես եկավ նաև Հովհ. Թումանյանը:

նան Քուչակին ներշնչման այլազանությւնը, գաղափարներու նորությւնը և ճոխութիւնը, ոճի գերագոյն սեղմութիւնը ու նրբութիւնը, զգացման ներուժութիւնը, բացատրական չքնադ գիտերը: Բայց կը հաւասարի Սայաթ-Նովային, թեպէտ և խառնուածքները տարբեր են այդ երկուքին մէջ: Սայաթ-Նովան աւելի խոր զգայնութիւն մը կը յայտնէ, ծանր ու խոհուն բան մը կայ իր ներշնչմանը մէջ, անկեղծ տառապանքի շեշտ մը կը զգացուի իր սիրերգին խորը. իր տարփատենչ սիրտը, ուր ցանկութիւնը չէ միշտ թրթռացողը, այլ մերթ մաքուր քնքուշ զգացում մը...»¹: Ամեն ինչ կարծեք թէ ճիշտ է: Սակայն Չոպանյանը մի էական կետում, այնուամենայնիվ, կարծես սխալվում է: Իգուր է նա Սայաթ-Նովայի սիրո մէջ տարփալից ցանկությանը տեղ տալիս և վերջինիս համեմատ «մաքուր քնքուշ զգացումը» տեսնում իբրև հազվադէպ մի բան, քանի որ Սայաթ-Նովան, ինչպէս գրում է Պ. Սևակը, «ունի մի ներքին ամոթխածություն, որ ամենից առաջ բնավորություն է և ապա բխում է իր այն մոգական սիրուց, որ ավելի պաշտամունք է, քան տենչանք, ու եթէ տենչանք է, ապա իսպառ զերծ է տռփանքից»²:

Աշուղ-բանաստեղծի սիրո այս յուրահատկությունը նկատել են ուսումնասիրողներից շատերը: Դեռ Սայաթ-Նովայի առաջին ուսումնասիրողը՝ Գ. Ախվերդյանն է եղել այն համոզմանը, որ Սայաթ-Նովան իրեն հեռու է պահել «մարմնամուլ զգացումներից»³: Ավելի ուշ մեկ այլ սայաթնովագետ գրեթէ նույն միտքն է հայտնել. «Մեր աշուղը (Սայաթ-Նովան – Վ. Ա.) իր սիրաբանութիւնը հոգեկան երկիւղածութեամբ օրհնած է. դարը, ժամանակակից հայկական պարկեշտութիւնը թէև իր քնարով կ'արատաւորի, սակայն ան պատկառանքի սահմանէն դուրս էլած չէ. իր տաղերը բաղդատելով ժամանակակից սիրերգու ոգւոյն հետ, Սայեաթ կոյս գուսան մը ամօթխած աշուղ մըն է: Ծայրէ ծայր կարդալով իր տաղերուն հաւաքածոն, չենք գտներ տող մը որ անպատկառ սիրաբանութեան ստուեր մը ունենայ: Ամբողջ քերթողական

յանը՝ գրելով «մի թուցիկ թեթև հոդված» (Թումանյանի արտահայտությունն է), որն առաջին անգամ տպագրվեց «Հորիզոնի»՝ 1911 թ. համարներում (թիվ 90-99), իսկ հետագայում՝ 1916 թ., մասնակի փոփոխություններով հրատարակվեց առանձին գրքույկով: Այդ հոդվածում Թումանյանը համեմատում է երեք մեծ բանաստեղծների՝ Ն. Քուչակի, Ն. Հովնաթանի և Սայաթ-Նովայի սերը և իրավացիորեն եզրակացնում. «Եթէ երբեմն էլ տխուր ձայներ ունեն (Ն. Քուչակն ու Ն. Հովնաթանը – Վ. Ա.)՝ նրանք էլ մերժած հուսահատի հառաչանքները չեն, այլ սիրված բախտավորի տրտունջներն ու քմահաճույքներն են... Էստեղ առաջ է գալիս Սայաթ-Նովայի տխուր-ազնիվ դեմքը: Կանգնեցնենք նրան Նաղաշ Հովնաթանի ու Քուչակ Նահապետի զվարթ պատկերների դեմը: Ահա թե ով է դժբախտը սիրոյ մէջ և ահա թե որտեղ են մերժւած սիրոյ իսկական հառաչանքն ու տառապանքը» (Թումանեան Հովն., Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը, Թիֆլիզ, 1916, էջ 21): Ինչպէս տեսնում ենք, նույն համոզմանն է եղել և Հ. Թումանյանը:

¹ **Չոպանեան Ա.**, Նաղաշ Հովնաթան աշուղը եւ..., էջ 13:

² **Սևակ Պ.**, նշվ. աշխ., էջ 130:

³ Տե՛ս **Ախվերդեան Գ.**, Սայեաթ-Նովայ, էջ թ:

խանդը անկեղծութեան կոյս մարմաջով բռնկած է»¹: Գրեթէ նույն միտքը այլ ձևակերպմամբ հայտնել է Ն. Աղբալյանը, ըստ որի՝ Սայաթ-Նովայի սերը մի զգացմունք է, «ուր փայլում է խանդադատանքը՝ սքողելով տարփանքն ու տռփանքը»²: Ժամանակին Մ. Աբեղյանն էլ նկատել է, որ Սայաթ-Նովայի սերը «ֆիզիկական կրքի զվարճություն» չէ, «հեթանոսական սեր» չէ, «Սայաթ-Նովայի միտքը հեռու է այդ բանից, երկրավոր զգայականությունից: Եվ այդ սերն անարատ մաքուր է»³: Սայաթ-Նովայի՝ սիրուն տված գնահատականների այս նմանությունները կարելի է շարունակել՝ մտաբերելով այլ սայաթնովագետների համագործակցության և համանշանակ խոսքերը: Սակայն մեջբերվածն արդեն, կարծում ենք, բավարար է՝ համոզվելու, որ սայաթնովյան սերը իսկապես էլ վերերկրային է՝ զերծ մարմնականից, տռփական վայելքներից, նման պաշտամունքի, հարատև ինքնայրման: Հարկ եղած դեպքում ասվածը ևս մեկ անգամ փաստելու համար բոլորիս քաջածանոթ տասնյակ տողեր ու տներ կարելի է իրար հետևից շարել նաև սայաթնովյան տարբեր սիրերգերից՝ ապացուցելու, որ Սայաթ-Նովայի «Մերը կոպիտ մարմնականից զերծ է այնքան, որ թվում է, թե այդ Սիրո տերը նույնիսկ կիրք չունի»⁴: Այսքանից հետո ավելի քան տարօրինակ է, թե ինչպես է Ա. Չոպանյանը, առանց ասածը որևէ օրինակով փաստելու, կարծիք հայտնել՝ գրելով, թե Սայաթ-Նովայի սիրերգության մեջ «**ցանկությունը չէ միշտ թրթռացողը**, այլ մերթ մաքուր քնքուշ զգացում մը»:

Հ. Բախչինյանը, Սայաթ-Նովայի «լեզենդանման» սերը համեմատելով Լեյլի-Մեջնունի արևելյան սիրավեպի հերոս Մեջնունի «լեզենդային» սիրո հետ, մեր աշուղ-բանաստեղծին համարում է «մեջնունյան տիպի սիրահար», որը ևս ներկայանում է մեզ որպես անհուտրեն սիրահարված երգիչ⁵, և Մեջնունի սիրո բնավորությունը բնութագրելու համար վերապատմելով մեջբերում ռուս հեղինակ Ի. Կրաչկովսկու միտքը. «Ինչպես նկատել է Ի. Կրաչկովսկին, մեջնունյան սիրուն բնորոշ է պլատոնականությունը կամ ուզրիտականությունը (արաբական ուզրա ցեղի անունից), ինչպես նաև միստիկականությունը»⁶: Գրքի հետագա շարադրանքում Բախչինյանը ծավալում ու պարզում է այս վերջին միտքը: «Միջնադարյան հոգևոր-միստիկական ներբողների մեջ, – գրում է նա, – առկա է նաև աստծուն երկրպագող հավատացյալի ինքնաժխտման մոտիվը, որ հիմնականում արտահայտվում է աստվածային վսեմության ու մարդկային ոչնչության հակադրությամբ: Այդ մոտիվն

¹ **Երեմեան Ս.**, Գեղեցկագիտական, «Հայ աշուղներ», Բ., «Բազմավեպ», 1903, թիվ 10, էջ 434:

² **Աղբալյան Ն.**, Ամբողջական երկեր, հ. 2, Բեյրութ, 1966, էջ 81:

³ **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 540:

⁴ **Սևակ Պ.**, նշվ. աշխ., էջ 183:

⁵ Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 154-156:

⁶ Նույն տեղում, էջ 156:

էլ իր բանաստեղծական արտահայտությունն է գտել Նարեկացու մատյանում: Այն լայն տարածում է գտել նաև արևելյան միստիկական-սուֆիական քնարերգության մեջ՝ ավանդվելով սիրերգությանը: Միրահարն աստվածացնելով սիրած կնոջը և ընդգծելով նրա շուքն ու վեհությունը, հակադրել է նրան իր անարժան անձը, գետնատարած խոնարհվելով նրա առաջ»¹:

Ըստ Հ. Բախչինյանի՝ այդպիսին է նաև սայաթնովյան սերը²: Գրականագետը մեր մեծ սիրերգակի սերը նաև համեմատում է Ն. Հովնաթանի սիրերգության հետ և գտնում, որ Սայաթ-Նովայի սերը «գրեթե՝ լիովին գերծ է մարմնական կրքից, հովնաթանյան բերկրանքից և մահվան դրոշմ է կրում»³:

Արշակ Չոպանյանն էլ Սայաթ-Նովայի սիրո քնարերգության մեջ տեսնում է միստիկականություն և սիրո ազնիվ տառապանքից ծնունդ առած նրա սիրերգությունը հակադրում Հովնաթանի՝ հրճվալից կենսասիրությամբ վարակված սիրո ներշնչանքին. «Միստիքական ծալքեր ունի (Սայաթ-Նովայի սիրերգը – Վ. Ա.), ուր Աստուծոյ մոայլ ստուերը կը տիրապետէ սիրոյ վարդ ոգիին: Յովնաթանի ներշնչումը աւելի պարզ է. անոր գլխաւոր աղբիւրն է կեանքի հրճուանքը...»⁴:

Ա. Չոպանյանը նաև համեմատում է Նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի լեզվի ու ոճի առանձնահատկությունները, անում եզրակացություններ: Մենք բավականանանք՝ քաղվածքաբար մեջ բերելով միայն այդ հատվածները, քանի որ մեծ քնարերգուների լեզվի ու ոճի հարցերը ուսումնասիրության այլ նյութ են. «Ոճը, թե՛ Յովնաթանին և թե՛ Սայեաթ-Նովային մեջ, փափուկ է և նուրբ,– ի նկատի ունենալով անշուշտ՝ լուսագոյն կտորները. Սայեաթ-Նովայինը՝ աւելի ծանր, խոր ու վեհ, Յովնաթանինը՝ աւելի թեթեւ, շնորհալի, ոստոստուն, լուսավոր»⁵: «Լեզուի տեսակետով, Յովնաթան շատ տարբեր է Սայեաթ-Նովայէն: Յովնաթանի լեզուն խառնուրդ մըն է արեւելեան և արեւմտեան հայերէնի, գրաբարի զարդերով բարդացած, հին աշուղական բանաստեղծութեան ասութիւններով ու բառերով ճոխացած. Սայեաթ-Նովայի լեզուն պարզ է, միատարր, Թիֆլիսի Հայոց տեղական բարբառն է՝ անխառն»⁶: Այստեղ, կարծում ենք, տեղին է շրջանառության դնել Ա. Չոպանյանի ևս մեկ խոսքը՝ ասված Սայաթ-Նովայի, Նաղաշ Հովնաթանի ու Ն. Քուչակի վերաբերյալ, որն ունի առավել զովասանական, ներբողական բնույթ. «Ժողովրդական կամ աշուղական բանաստեղծութեան ամենէն գեղեցիկ ու կատարեալ էջերը անոնք են զոր արտադրած են ժողովրդական

¹ Նույն տեղում, էջ 214:

² Տե՛ս նույն տեղը, էջ 156:

³ Այստեղ, իհարկե, **գրեթե** բառը տեղիք է տալիս առարկության:

⁴ **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 156:

⁵ **Չոպանեան Ա.**, Նաղաշ Յովնաթան աշուղը եւ..., էջ 13:

⁶ Նույն տեղում, էջ 17:

⁷ Նույն տեղում, էջ 15:

կեանքէն, լեզունն ու ճաշակէն ներշնչուող բայց և նոյն աստէն իրենց քերթողական բնագոյին որոշ չափով գրչական հմտութիւն ու ճաշակ միացնող աշուղներ. այսպէս եղած են Սայաթ-Նովա, Նաղաշ Յովնաթան, Ղունկիանոս, Քուչակ...»¹:

Այսպիսով, քննության թիրախում ունենալով Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գրքի առաջաբանը, մենք ձգտեցինք ցույց տալ, որ նրա հեղինակը՝ հայ միջնադարյան բանաստեղծության լավագոյն գիտակներից մեկը, առաջինն է հղացել միտք գրականագիտական տարբեր հարցերի կապակցությամբ համեմատության մեջ դնելու միջնադարյան մեր մեծ քնարերգուներից երեքի՝ Ն. Քուչակի, Ն. Հովնաթանի ու Սայաթ-Նովայի ստեղծագործական առանձնահատկությունները, նրանց քնարերգության մեջ տեսել ու մատնանշել ինչպէս էական տարբերակիչ, այնպէս էլ որոշ ընդհանուր հատկանիշներ: Մեր հոդվածի նպատակից ելնելով՝ մենք, անշուշտ, առանցքում ունեցանք Ա. Չոպանյանի հատկապէս այն գնահատականները, որոնք ուղղակիորեն կամ հիշյալ բանաստեղծների, մասնավորապէս Ն. Հովնաթանի ստեղծագործությանը տված որակումների միջնորդությամբ կամ զուգորդությամբ վերաբերում էին Սայաթ-Նովային: Թերևս առաջին անգամ հրապարակ հանելով ու շրջանառության մեջ դնելով չոպանյանական այդ մտքերը՝ ցույց տվեցինք, որ դրանք հիմնականում ճիշտ են բնութագրում Սայաթ-Նովայի քնարերգության մի շարք կողմեր, մասնավորապէս պարզում են նրա երգերի և արևելյան քնարերգության միջև եղած գեղարվեստական-տիպաբանական ընդհանրություններն ու երևան հանում սիրո բնավորության առանձին եզրեր, և, որ ոչ պակաս կարևոր է, նկատեցինք Ա. Չոպանյանի և հետագա սայաթնովագետների գնահատականներում բազմաթիվ ընդհանրություններ: Գնահատականների նմանությունները, ինչպէս տեսանք, հաճախ ակնառու են, աննշան տարբերությամբ երբեմն նույնն են նաև խոսքն ու միտքը, միայն թե շատ գնահատականներ ու մտքեր, որ շատերից առաջ արդեն արտահայտել էր Ա. Չոպանյանը, հաջորդները նրանից անկախ ներկայացրել են ավելի հիմնավոր:

Вачаган Авагян – Одно дополнение к саятноведению

В данной статье, автор, исследуя предисловие книги “Ашуг Нагаш Овнатан и художник Овнатан Овнатанян” великого знатока армянской средневековой поэзии А. Чопаняна, засвидетельствовал, что ее автор был первым в истории армянского литературоведения, кто решил сравнить творческие особенности великих армянских средневековых лириков Саят-Новы, Н. Кучака и Н. Овнатана по разным литературным аспектам. Исходя из цели данной статьи, автор обратил особое внимание на те оценки А. Чопаняна, которые непосредственно, или же посредством оценок вышеупомянутых

¹ Չոպանեան Ա., Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺԷ:

поэтов данного произведения Н. Овнатана имеют отношение к Саят-Нове. Пожалуй, впервые используя чопаняновские суждения в научных кругах, было обосновано, что они в основном правильно характеризуют разные аспекты лирики Саят-Новы. Также было доказано, что большинство этих оценок в своем содержании совпадают со мнениями последующих саятнововедов. Впрочем, последние, сами того не замечая представили суждения Чопаняна более обоснованно, с особым звучанием и обширной структурой.

Vachagan Avagyan – *An Addition to Sayat-Nova Science*

In the present article, studying the introduction of the great expert on Armenian Medieval poetry A. Chopanyan's book "Troubadour Naghash Yovnatán and Artist Yovnatán Yovnatanean", the author states that A. Chopanyan was the first in the history of Armenian literary criticism to compare the creative peculiarities of Armenian Medieval three great lyric poets N. Kuchak, N. Hovnatán and Sayat-Nova according to various literary aspects. Proceeding from the purpose of the article, the author particularly focuses on those evaluations of A. Chopanyan which directly or by means of the evaluations of the poets of the above-mentioned work of N. Hovnatán refer to Sayat-Nova. Having, perhaps, for the first time used Chopanyan's judgments in scientific circles, it was proved that they, on the whole, correctly characterize the different aspects of Sayat-Nova's lyric poetry. It has also been proved that the majority of these estimates coincide in the content with opinions of the following researchers of Sayat-Nova's works. The latter, however, without noticing it, presented the judgments of A. Chopanyan more reasonably, with special perception and extensive structure.